ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ (1895—1900)

Պ. Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

1895—1896 թթ. կոտորածների հետևանքով ջարդերից մազապուրծ հազարավոր արևմտահայեր թողեցին իրենց բազմադարյան հայրենիքը և տարադրվեցին այլ երկրներ։ Ամենից առաջ նրանք դիմեցին դեպի Ռուսաստան, որը դարեր շարունակ թուրքական բռնակալական դաժան լծի տակ տառապող հայ ժողովրդի կողմից դիտվել է որպես փրկության հանգրվան։

Ընդհուպ մինչև XIX դ. վերջին քառորդը ցարիզմը կայսրության սահմանն անցած արևմտահայերին տալիս էր բնակության տեղ, ինչպես նաև հատկացնում էր որոշակի հողակտոր[1]։ Չնայած 90-ական թվականներին Մերձավոր արևելքում ցարիզմի՝ ռազմաքաղաքական շահերով թելադրված քաղաքական նոր ուղղության որդեգրումից հետո աստիճանաբար սահմանափակվեց, իսկ հետո արևմտահայերին իսպառ արգելվեց բնակություն հաստատել կայսրության տարածքներում, այնուամենայնիվ, 1894—1896 թթ. Արևմտյան Հայաստանում հայկական կոտորածների եռուն շրջանում Կովկասի իշխանություններն անկարող էին ռուսական սահմանները փակել գաղթականների առջև։ Ռուս սահմանապահ զինվորները, անկարող լինելով աչքերը փակել տեղի ունեցող կոտորածների առջև, հաճախ իշխանություններից գաղտնի թույլ էին տալիս հայերին պատսպարվելու ռուսական սահմաններում[2]։

Իշխանությունները ստիպված էին մտահոգվել տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականների ճակատագրով։ Կենտրոնական կառավարությունը հարկադրված եղավ գաղթականների օգնության խնդիրը դարձնել կառավարական հատուկ վերաբնակեցման հանձնաժողովի քննության առարկա[3]։ Որոշվեց նրանց բնակության տեղ հատկացնել կայսրության ներքին նահանգներում՝ առանց անշարժ գույքի իրավունքի[4]։ Հարավային Ռուսաստանում՝ Ղրիմում, Օդեսայում, Նովոռոսիյսկում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում վաղուց ի վեր հիմնված հայկական գաղթօջախները համալրվեցին հազարավոր գաղթականներով[5]։

Չնայած ցարիզմը 1898 թ. հատուկ քաղաքական շահերից ելնելով, օրենք ընդունեց արևմտահայ գաղթականներին իրենց նախկին վայրերում վերաբնակեցնելու մասին, գաղթականների մեծ մասն ընդունեց ռուսահպատակություն և մշտական բնակություն հաստատեց Ռուսաստանում։

Ռուսական հասարակայնության լայն խավերը, խորապես մտահոգված լինելով տարաբախտ արևմտահայության ճակատագրով, Ռուսաստանի սահմանն անցած հայ գաղթականներին ցույց էին տալիս բարոյական և նյութական լայն օգնություն։ Ռուս առաջադեմ մտավորականները՝ գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, հրապարակախոսներ, հանդես եկան հոդվածներով, գիտական ուսումնասիրություններով ու գեղարվեստական ստեղ-

---

[1] Архив внешней политики России (այսուհետև (АВПР), ф. Политархив, д. 3441, л. 308.

[2] Новое обозрение. 1897, № 4353.

[3] С. Петербургские ведомости, 1897, № 32.

[4] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 269, թ. 36։

[5] Мир божий, 1899, кн. 9, с. 21, տե՛ս նաև Вестник Европы, 1898, кн 11, с. 852.

ծագործություններով, որոնց մեջ բարձր էին գնահատում հայ ժողովրդի խոշոր ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ և իրենց ընթերցողներին բերում այն համոզմանը, որ հին, տաղանդավոր ու ազատաբաղձ հայ ժողովրդին ռուս հասարակությունը պետք է վերաբերվի ջերմությամբ և ցույց տա գործուն օգնություն։ Ռուս առաջադեմ գործիչներին մտահոգում էր արևմտահայության օրհասական վիճակը, ուստի, կոչ էին տնում «օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին»[6]։

Ռուսաստանի սահմաններն անցած արևմտահայ գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու կոչին արձագանքեցին հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, ուսուցիչներ, ուսանողներ, բանվորներ, գյուղացիներ, պետական ծառայողներ։ Տարաբախտ հայ գաղթականների պաշտպանությամբ ռուս հասարակայնությանն ուղղված օգնության կոչով հանդես եկավ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը։ Նրա խմբագիր է. Ուխտոմսկին այդ մասին գրում էր. «Մեզ մոտ վերին աստիճանի լուրջ խնդիր է «գաղթականության խնդիրը», այն է՝ Թուրքիայից փախած այն թշվառների վիճակի խնդիրը, որոնք, փախչելով մոլեռանդ Թուրքերի ու քրդերի ձեռքից, պաշտպանություն և ապաստան են որոնում Ռուսաստանի սահմաններում։ Քրիստոնյա մեծ պետությանը Թուրքահայերը վաղուց սովորել են նայել որպես իրենց վաղեմի պաշտպանին,—շարունակում էր նա,—այդ բանի պարզ ապացույցը այն ոգևորված ընդունելությունն է, որ ազգաբնակչության կողմից ռուսական զորքին ցույց էր տրվում ամեն անգամ, երբ նա մտնում էր որևէ քաղաք կամ գյուղ՝ վերջին ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ։ Չի կարելի առանց խորին ցավակցության նայել այդ հիվանդ, սննդի պակասությունից ու երկար, հոգնեցուցիչ ճանապարհորդությունից հյուծված, անտուն, անտեր թափառականների վրա, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ արարածները տանջվում են միայն նրա համար, որ դժբախտություն են ունեցել քրիստոնյա լինելու»[7]։ «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը կոտորածից հետո մնացած հայ որբ ու անպաշտպան մանուկների դժբախտ կյանքին անդրադառնալով, մարդկային սիրտը մորմոքող տողեր էր գրում նրանց մասին։ «Ի՞նչը կարող է ավելի ծանր և անուրախ լինել նման թշվառ ճակատագրից։ Ի՞նչը կարող է ավելի տխուր և թախծալի լինել,—հարց էր տալիս թերթը,—երբ տարաբախտ փոքրիկները, վաղ մանկությունից կորցնելով հայրերին ու մայրերին, զրկվելով նրանց նուրբ փաղաքշանքից ու հոգատարությունից՝ հարկադրված են ընդառաջ գնալ առօրեական զանազան ստախոսությունների և ապրել բարի մարդկանց պատահական ողորմածությունների»[8]։ Հոդվածագիրը ռուսական հասարակության ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ շուրջ 400.000[9] հայ որբեր այժմ հանձնված են դաժան բախտի քմահաճույքին։ «Բարի և մեծահոգի Ռուսիա,—գրում էր նա,—մի՞թե կարող ես լուռ մնալ և օգնության ձեռք չպարզել»[10]։

Մերկացնելով մեծ տերությունների դաղութային գիշատիչ քաղաքականությունը, հոդվածագիրն իր ղայրույթը ուղղում է նրանց գործակալ միսիոներների դեմ, որոնք, կեղծ մարդասիրական դեր ստանձնելով, հայ որբերին կտրում էին իրենց մայր ժողովրդից[11]։ Նա ուրախությամբ է արձանագրում այն փաստը, որ Ռուսաստանի սահմանն անցած հայ որբերն ապրում են ապահով և երաշխավորված են կրոնական բռնության վտանգից[12]։

---

6 Ф. Волховский, Почему армяне бунтуют, Женева, 1905, с. 22.
7 С. Петербургские ведомости, 1896, № 272.
8 Նույն տեղում։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։

Հայ գաղթականներին օգնելու նպատակով ռուս առաջադեմ մտավորականները կազմակերպում էին հրապարակային դասախոսություններ, թատերական ներկայացումներ, հիմնում հայ-ռուսական ընկերություններ։ 1895 թ. գրող Ա. Միկլաշևսկին Ս. Պետերբուրգում հանդես եկավ հայ ժողովրդին նվիրված երկու դասախոսությամբ։ Այդ մասին «Արաքսը» գրում էր. «Հայ ընթերցող հասարակությանը ծանոթ երիտասարդ ռուս ճանապարհորդ և գրող պ. Ար. Միկլաշևսկին այս տարի երկու անգամ դասախոսություն արեց տաճկահայոց մասին իր վերջին երկու անգամ արած ճանապարհորդությունների մասին ի Փոքր Ասիա։ Առաջին անգամ դասախոսեց գարնանը կայսերական աշխարհագրական ընկերության դահլիճում, իսկ երկրորդ անգամ՝ նոյեմբերի 4-ին՝ Տնտեսագիտաց ժողովում»[13]։ Ռուս հասարակության նյութական օգնությունն արևմտահայ գաղթականներին սկսվեց վերջիններիս՝ ռուսական սահմանը անցնելու առաջին օրվանից, երբ ռուսական լրագրերում տպագրվեցին նրանց օրհասական դրության մասին առաջին հոդվածները։ «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը գրում էր. «Մեր թերթերում գաղթականների մասին եղած հայտարարությունը շուտով արձագանքվեց յարոսլավցի մի ուսուցչուհու հոգում, որը շտապեց իր ավանդը ներդնել մահմեդական մոլեռանդությանը զոհ դարձած դժբախտ հայերի օգնության գործում»[14]։ Նրա օրինակին հետևեց մոսկվացի մի ուսանող, որն իր չնչին միջոցներից որոշակի գումար տրամադրեց հայ գաղթականներին[15]։

Անդրկովկասի մի շարք քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաթումում, Երևանում կազմակերպվեցին գաղթականների օգնության ընկերություններ, նրանց համար հիմնվեցին ապաստարաններ[16]։

Նշանավոր հրապարակախոսներ Վլ. Գոլմստրեմը, Մ. Մենշիկովը, Գամման շտապեցնում էին օգնության գործը։ «Մինչև երբ սպասել, ժամանակն է օգնություն ցույց տալ տանջվող հայերին,—գրում էր «Ռուսսկի լիստոկը»[17]։ «Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը առաջարկում էր ավելի գործուն օգնություն ցույց տալ խորապես դժբախտ տառապյալներին[18]։ Արևմտահայ գաղթականներին նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու անհրաժեշտությանն է նվիրված «Նեդելյա» լրագրում տպագրված՝ Մ. Մենշիկովի հոդվածը։ Նա կարծում էր, որ էականն այն չէ, թե որքան է օգնության համար հատկացված դումարը, այլ այն, որ ռուս ժողովրդի մեջ ձևավորվում է համակրանքի ու կարեկցանքի, տառապյալ հայ գաղթականներին նյութական օգնության ցուցաբերելու զգացում[19]։ Պարզաբանելով Ռուսաստանի՝ դեպի Փոքր Ասիա ունեցած առաջընթացը, նրա հետապնդած նպատակներն ու Անդրկովկասի սահմանների ապահովության հարցը, ինչպես նաև ռուս-թուրքական պատերազմների ընթացքում ռուսական բանակներին արևմտահայերի մատուցած ծառայությունները, «Բիրժևիե վեդոմոստի» լրագիրը նշում էր. «Ռուսաստանի շահերը պահանջում են, որ նրա սահմանների մոտ տեղի չունենան արդյունաբերության ու առևտրի հաջողություններին խոչընդոտող կոտորածներ ու կողոպուտներ։ Պատմական պատգամները ռուս ժողովրդին թույլ չեն տալիս անտարբերությամբ վերաբերվել քրիստոնյաների նկատմամբ կիրառվող բռնություններին»[20]։

---

13 Արաքս, 1894—1895, գիրք Ա, էջ 238։

14 Русские ведомости, 1826, № 158.

15 Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 28; ց. 1, գ. 357, թ. 21։

16 Тифлисский листок, 1897, № 9, նաև Մշակ, 1897, թիվ 9։

17 Тифлисский листок, 1897, № 66.

18 Сибирский вестник, 1897, № 29.

19 Неделя, 1897, № 118.

20 Биржевые ведомости, 1836, № 261.

Հրապարակախոս Գամմայի հոդվածները ռուս ժողովրդին մղում էին հարևան քրիստոնյա ժողովուրդներին ակտիվ նյութական ու բարոյական օգնություն տալուն, քննադատում էին պաշտոնական շրջանների կողմից հայ ժողովրդի դեմ կատարած անարդարացի հարձակումները[21]։ Մատնացույց անելով հայերին օգնելու նպատակով Արևմտյան Հայաստանում ստեղծված ընկերությունները, նա ռուսական պետությանն ու հասարակությանը կոչ էր անում հետևել նրանց մարդասիրական օրինակին[22]։ «Մի՞թե մոռանում ենք մեր դրացի, մեզ միշտ բարեկամ հայերին»[23],—գրում էր «Ռուսսկոյե սլովո» լրագիրը,—որոնք մշտապես իրենց փրկության հույսը կապում էին Ռուսաստանի հետ»[24]։ Ռուս ականավոր գեղանկարիչ Վ. Վերեշչագինը «Բիրժեվիե վեդոմոստի» լրագրին հղած նամակում, հույս էր հայտնում, որ Եվրոպայում 1897 թ. հույն-թուրքական պատերազմի ավարտից հետո հաստատված խաղաղությունը մեծ տերությունները կօգտագործեն թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների վիճակը բարվոքելու նպատակով[25]։

Արևմտահայության օգնության կանչին էր արձագանքում «Նովոստի» լրագիրը. «Հայերը տանջվում ու տառապում են թուրքական բռնակալությունից, և ողջ քրիստոնեական Եվրոպայի սրբազան պարտքը պահանջում է, որ հայ ազգաբնակչությանը տրվի հնարավոր օգնություն ու հովանավորություն»[26]։

Անկախ այն բանից, թե ցարիզմը իր ռազմաքաղաքական շահերից ելնելով դարի 90-ական թվականներին արևմտահայության հարցում ինչպիսի ուղեգիծ էր վարում, Արևմտյան Հայաստանում, ինչպես նաև Թուրքիայի մի շարք քաղաքներում հաստատված ռուսական հյուպատոսությունները օգնում էին հայերին, նրանց տալիս ապաստարան, տրամադրում նյութական միջոցներ, միջնորդում թուրքական իշխանությունների առջև՝ փրկելով նրանց կյանքը։ 1895 թ. Էրզրումում տեղի ունեցած զանգվածային կոտորածի ընթացքում, ռուսական հյուպատոսը հայերին ցույց էր տալիս բժշկական օգնություն[27]։ Վանի փոխհյուպատոս Մաևսկին օգնում էր ջարդերից փրկված հայերին ապահով տեղափոխվելու Ռուսաստանի անդրկովկասյան սահմանները[28]։ Ռուսական դեսպանատները հայերի համար հաճախակի վերածվում էին ապաստարանի[29]։ 1895 թ. հոկտեմբերին Տրապիզոնի ջարդերի վերաբերյալ զեկուցագրում Նելիդովը հայտնում էր, որ ռուսական հյուպատոսարանը լեփ-լեցուն է եղել հարևան տներից ու թաղերից փախած ընտանիքներով, որոնց մի մասը շատ օրեր անցկացրել է Տրապիզոնի նավահանգստում խարըսխված «Աղով» նավում[30]։ Տրապիզոնի ռուսական հյուպատոսը կոտորածի ժամանակ «Աղով» նավը մոտեցրեց ափին, ուր պատսպարվեցին տասնյակ հայ ընտանիքներ, որոնք հետո նույն նավով տեղափոխվեցին Օդեսա[31]։ Իսկ 1896 թ. Կ. Պոլսում սեպտեմբերի 14-ի և 17-ի ահավոր ջարդերի ժամանակ «Ռուսաց դեսպանատան հյուպատոսարանի և շրջենավային ընկերության շինության մեջ ապաստարան գտնողների թիվը հասնում էր 600-ի»,—գրում էր «Մշակ»-ը[32]։ Ջարդերից մազապուրծ հայերը «ռուսական դեսպանության

21 Նույն տեղում, 1896, թիվ 280։
22 Նույն տեղում, 1896, թիվ 86։
23 Русское слово. 1896. № 88.
24 Биржевые ведомости, 1896. № 291.
25 Նույն տեղում, 1897, № 198։
26 Новости, 1896. № 242.
27 Луч, 1896. № 22.
28 Մշակ, 1896, թիվ 120։
29 Մշակ, 1896, թիվ 10։
30 АВПР, ф. Политархив. д. 3433. л 63—66· д. 3449. л. 184.
31 Неделя, 1895. № 41.
32 Մշակ, 1896, թիվ 109։

միջնորդությամբ ստացան բնակության տեղ և ապրում էին բոլորովին ապահով՝ Ռուսաստանի դրոշի հովանու տակ»[33]։

Թուրքիայում ռուսական դեսպան Ի. Ա. Զինովևը, ինչպես նաև մյուս ծառայողները արևմտահայության օգնության ֆոնդին տրամադրեցին նյութական միջոցներ[34]։ Ա. Ի. Զինովևը մեծ ձեռներեցություն ցուցաբերեց «Բրատսկայա պոմոշչ»-ի խմբագրության տրամադրած միջոցներով հայ որբերի համար Արևմայան Հայաստանում ապաստարաններ հիմնելու գործին[35]։

Ռուսաստանի սահմանն անցած հազարավոր բոկոտն, քաղցած, անտուն գաղթականներին օգնության ձեռք մեկնեց ռուս ժողովուրդը։ Այնքան հզոր ու ազդու էր ժողովրդական ձայնը, որ ցարիզմը 1896 թ. դեկտեմբերի 11-ին հարկադրված հատուկ հրամանագիր հրապարակեց գաղթականությանը նյութական օգնության նպատակով հանգանակություն սկսելու վերաբերյալ[36], իսկ հետագայում Արևմտյան Հայաստանում համաճարակների տարածման ժամանակ հայերին օգնելու համար այնտեղ գործուղվեց հատուկ բժշկական հանձնաժողով՝ Յու. Զավրիևի գլխավորությամբ[37]։ Ռուսական Կարմիր խաչի ընկերությունը Հայաստանում բացեց արևմտահայ գաղթականների օգնության հատուկ բաժանմունքներ, ապաստարաններ, որբանոցներ, որտեղ իրենց հողատար աշխատանքով աչքի ընկան բուժքույր Ե. Մ. Կոլեսնիկովան և բուժակ Պ. Բոգունը[38]։ Շուտով Իգդիրում բժիշկ Զելյադինսկու ղեկավարությամբ բացվեց գաղթականների նոր հիվանդանոց[39]։

«Անդրկովկասի որոշ վայրերում տեղական իշխանությունները նույնպես հնարավոր օգնություն են ցույց տվել գաղթականներին,—գրում էր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստին, և այդ տեսակետից հատուկ շնորհակալությամբ պետք է հիշատակել Երևանի նահանգապետ կոմս Տիզենհաուզենին, Կարսի Տոմին, Թիֆլիսի իշխան Շերվաշիձե նահանգապետերին»[40]։

Արևմտահայությանը օգնություն ցուցաբերելու կոչով իր ձայնը հնչեցրեց ռուսական ուղղափառ եկեղեցին՝ ռուսական հասարակությանն առաջարկելով հանգանակություն անել այդ նպատակով[41]։ Հեռավոր հյուսիսից հնչեց Կրոնշտադտի վանքի վանահոր ձայնը՝ հօգուտ հայ գաղթականների[42], որը բարձր գնահատվեց երախտապարտ հայ ժողովրդի կողմից[43]։ Նշանավոր եկեղեցական գործիչ, եպիսկոպոս Վլադիմիրը Վլադիկավկազում լույս տեսնող «Կասբեկ» լրագրի խմբագրությանը հասցեագրած նամակում նշում էր. «Հանուն քրիստոնեական սիրո, որ ավանդել է մեզ մեր հավատի հիմնադիրը... հայերին նվիրաբերում եմ 25 ռուբլի... Հույս ունեմ, որ Վլադիկավկազի և Թերեքի ժողովուրդը կօգնի սովյալներին ոչ թե խոսքով կամ լեզվով, այլ գործով ու ճշմարտությամբ»[44]։

Ցարական կառավարության՝ գաղթականներին օգնություն ցույց տալու վերաբերյալ օրենքի հրապարակումից հետո ռուս հասարակայնությունը առավել մեծ սիրով ու ջերմությամբ ձեռնամուխ եղավ օգնության գործին։ «Հրամանագիրն ընդունվեց անսքող հրճվանքով ու սրտի բացահայտ թեթե-

---

33 Նույն տեղում, թիվ 104։

34 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 131, թ. 1։

35 С. Петербургские ведомости, 1898, № 302.

36 Նույն տեղում, 1897, թիվ 38, Մշակ, 1897, թիվ 6։

37 Будущие устройства Армении по официальным дипломатическим документам Оранжевой книги, трактующие реформы в Армении, Петроград, 1915, с. 12—13.

38 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 256, ց. 1, գ. 1, թ. 1—2։

39 Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 104։

40 С. Петербургские ведомости, 1897, № 38.

41 Православный собеседник, 1897, кн. 8, с. 185.

42 С. Петербургские ведомости, 1896, № 237.

43 Նույն տեղում, 1897, թիվ 2։

44 Казбек, 1897, № 7.

վացմամբ»,—գրում էր «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստին»[45]։ Իսկ լրագրի 1897 թ. թիվ 221-ում լույս տեսած «Հայ որբերը» հոդվածից հետո, որտեղ պատկերված էր գաղթական մանուկների թշվառ վիճակը, հետագա բոլոր համարներում տպագրվում էին հանգանակության ֆոնդին նյութական միջոցներ տրամադրողների ամբողջական ցուցակներ։

Ռուսաստանի ընդարձակածավալ տարածքի բոլոր մասերում ծավալվեց օգնության մարդասիրական գործը՝ գաղթականներին տրամադրվեցին դրամ, սննդամթերք, գործվածքեղեն։ Օգնության գործը լավ կազմակերպելու համար «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագիրը առաջարկում էր տեղերում, իշխանության օրգաններին կից հեղինակավոր անձանցից կազմել մասնաժողովներ[46]։ Կովկասում իշխանության տեղական մարմինները հայկական բարեգործական ընկերություններին սկզբնական շրջանում արգելում էին օգնել արևմտահայ գաղթականներին[47], սակայն կառավարության որոշումից հետո օգնության գործը ավելի կազմակերպված բնույթ ստացավ։ «Թուրքիայից փախած գաղթականներին օգնելու համար,—գրում էր «Կավկազը»,—կառավարչապետի օգնական իշխան Ամիրախվարին բարեհաճեց հրամայել.

ա) Թիֆլիսի ոստիկանապետին հանձնել 300 ռ.՝ ճաշարաններից գաղթականներին ձրի ճաշ տալու համար,

բ) Թիֆլիսի նահանգապետին՝ 500 ռ., գաղթականներին հագուստով օգնելու...»[48]։

Միաժամանակ նախատեսվում էր գաղթականներին օգնելու համար տեղերում ստեղծել հանձնաժողովներ։ Շուտով այդ նպատակի համար իշխան Շերվաշիձեն ստեղծեց հատուկ հանձնաժողով[49]։

Արևմտահայության ազատագրական պայքարին համերաշխության ե ջարդերից փրկված գաղթականներին օգնության կոչով հանդես եկան Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջադեմ ուսանողները։ Նրանք անհուն վշտով էին ընկալում 1895—96 թթ. Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի տառապանքներից բարձրացող հառաչանքները, կարեկցում և իրենց համերաշխությունը հայտնում հայ ժողովրդի ազատագրական պայքարին։ Անջրպետվելով արևմտահայության հանդեպ ամեն մի անբարյացակամ դիրքորոշումից, ուսանող-երիտասարդությունը հայտնում էր. «Ոչ մի կապ չունենք այն ընթացքի հետ, որ բռնել են դեպի ձեր գործը մեր ընդհանուր թշնամիները, ազատության և առաջադիմության թշնամիները, որոնց համար կառավարությունը մի զենք է, իսկ ժողովուրդը, բացառյալ իրենց դասակարգի անձնավորությունները, շահագործման նյութ։ Մեր բոլոր համակրանքը ձեր կողմն է, հանուն ազատության կռվողների կողմը։ Մեր զգացումները այլապես էլ չեն կարող լինել, քանի որ մենք ևս կրում ենք նույնպես բռնակալության ճնշումը»[50]։

Ռուս ուսանողները հայկական կոտորածների ամենաեռուն պահին, ջերմ վերաբերմունք արտահայտելով ազատաբաղձ հայ ժողովրդի նկատմամբ, համոզմունքով ընդգծում էին. «Մենք հավատացած ենք, որ մեր խոսքերի տակ կստորագրեն բաղում այն երիտասարդները, որոնք դուրս են եկել բանվորական դասակարգից, և կմիանան մեզ հետ մնացյալ մասի առաջադիմական տարրերը»[51]։ Նրանց խոսքում անհողդողդ հավատ կար ազատագրական պայքարից ծնունդ առնող ազատ Ռուսաստանի և ազատ Հայաստանի պայ-

---

45 С. Петербургские ведомости, 1897, № 38.

46 Նույն տեղում։

47 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 25։

48 Закавказье, 1905, № 97.

49 Մշակ, 1897, թիվ 19։

50 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4033, ց. 1, գ. 1247, թ. 1։

51 Նույն տեղում, թ. 2։

ծառ ապագայի նկատմամբ։ «Մենք այժմ իսկ պատրաստ ենք սիրով ողջունել այն բոպեն,—գրում էին նրանք,—երբ ձեռք-ձեռքի կտան ազատ Հայաստանի ու ազատ Ռուսաստանի ուսանող երիտասարդները»[52]։

Ռուս ժողովրդի լավագույն զավակները, իրենց ձայնը բարձրացնելով հօդուտ արևմտահայ գաղթականության, անհուն վշտով ու սրտի ցավով էին ներկայացնում թուրքական գազանությունների զոհ գնացած 300—350.000[53] անմեղ հայերին ու նրանց որբացած մանուկների տարաբախտ, անհեռանկար վիճակը։ Ինչ խոսք, այդ թվի մեջ չեն մտնում այն հազարավոր մարդիկ, որոնք անհետացան լեռների խորխորատներում, դետերի կամ ծովերի ջրերում խեղդվեցին, ցրվեցին օտար աշխարհներ։

Ռուսական հասարակության կողմից հայ գաղթականներին ցույց տրված օգնության մասին «Մշակ»ը գրում էր. «Այդ համակրելի ու զորեղ ձայնի հնչելը հայերի համար կրկնակի նշանակություն ունի։ Այն կնպաստի ծայրահեղ թշվառության թեթևացմանը, որին ենթակա են այժմ 400.000 հալածականներ, և երկրորդ՝ դա մի փոքր կթեթևացնի ու մասամբ մոռացնել կտա այն ծանր տպավորությունը, որ ստեղծվել է ռուս մամուլի հայտնի բանակի անտեղի, անարդար և ատելության զգացումով ներշնչված հարձակումների հետևանքով»[54]։

Արևմտահայությանը օգնություն ցուցաբերելը և Արևմտյան Հայաստանում թուրքական գազանություններին վերջ դնելու ձգտումը աստիճանաբար դառնում էր համաժողովրդական գործ։ Ռուս ժողովրդի լավագույն զավակներ Վլ. Գոլմստրեմը, Ն. Մառը, Մ. Վ. Նիկոլսկին, Յու. Վեսելովսկին, Վ. Բրյուսովը, Ր. Բունինը, Վ. Ի. Գերյեն, Ա. Ն. Գրենը արևմտահայությանը օգնելու նպատակով 1896 թ. հրատարակեցին «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» ժողովածուն։ Նրանք իրենց առջև խնդիր էին դրել. նախ՝ ռուսական հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդի բազմադարյան հարուստ պատմությանն ու մշակույթին, պարզաբանել քաղաքակրթության մեջ մեծ ավանդ ներդրած հայ ժողովրդի արևմտյան հատվածի տագնապալից դրությունն ու օրհասական վիճակը, ապա՝ ժողովածուի վաճառքից ստացված գումարը տրամադրել արևմտահայության օգնության ֆոնդին։

Ժողովածուն ստեղծելու դժվարին, միաժամանակ շնորհակալ աշխատանքի ու նրա հետապնդած նպատակների մասին «Ռուսսկոյե բոգատստվոն» գրում էր. «Ռուս հրապարակախոսների, գիտնականների, գրականագետների ջանքերով ու լուսավորյալ կարեկցանքի շնորհիվ լուրջ խոշընդոտների առկայության պայմաններում էջ առ էջ ստեղծվեց այն գրական ատաղձը, որը կազմեց հայերի դրության վրա լույս սփռող «Եղբայրական օգնության» 1000 էջանոց վիթխարի հատորը։

Բարեբախտաբար գտնվեցին բավականաչափ անկողմնակալ ու բարի մարդիկ, որոնք, չնայած տգիտության ու քինախնդրության հետևանքով հայերի մասին առատորեն տարածվող չարամիտ մեղադրանքներին, օգնության ձեռք մեկնեցին 50.000 որբերի»[55]։

Ժողովածուի մասին ջերմ հոդված գրեց Է. Ուխտոմսկին։ «Ռուսական հասարակությանը հայերի հետ ծանոթացնելու նպատակով,—գրում էր նա,—գրքում բերված են մի շարք հոդվածներ այդ ժողովրդի կյանքի տարբեր կողմերի, նրա պատմության, գրականության, Ռուսաստանի համար նրա նշանակության մասին»[56]։ Ժողովածուի ճաշակով ձևավորումը և հայկական կյանքից վերցված համապատասխան լուսանկարների օգտագործումը ապահովում էին նրա հաջողությունը։ «Գիրքը տալիս է դեպի մահմեդական Գող-

52 Նույն տեղում։

53 Жизнь и искусство. Киев. 1897, № 58.

54 Մշակ, 1897, թիվ 1։

55 Русское богатство, 1897, № 10.

56 С. Петербургские ведомости, 1897, № 272.

գոթա հայկական «խաչելության» ճանապարհի ցնցող պատկերը,—գրում էր Վլ. Գոլմստրեմը։—Հանդարտ տխրություն, մեծ վիշտ, չարտահայտված թախիծ էր թաքնված այդ ժողովածուում»[57]։

Հասարակության վրա ժողովածուի ակտիվ ներգործության մասին «Մշակը» գրում էր. «Հայ որբերին ներկայացնող լուսանկարներից նայում են մանուկներ... ցնցոտիները հաղիվ են ծածկում մահմեդական ֆանատիզմի զոհերի բազմաչարչար մարմինը։ Բոբիկ, գլխաբաց փոքրիկները ձեռքերը սեղմել են կրծքներին և երկյուղ արտահայտող դեմքերով կպել են իրենց դժբախտ մոր փեշերից և նայում են։ Այդ հայացքները քարեր կճաքեցնեն և վագրի աչքերից անգամ արտասուք կքամեն»[58]։

Նույն նպատակներով հրատարակվեց նաև «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը 1895 թ.» ժողովածուն՝ պրոֆ. Լ. Կոմարովսկու առաջաբանով, որի մասին դրվատանքի ջերմ տողեր գրեց «Միր բոժի» ամսագիրը[59]։

Երկու ժողովածուներն էլ սպառվեցին շատ արագ։ Վաճառքը իրացրեցին կենտրոնական և գավառային պարբերականների խմբագրությունները։ «Տիֆլիսսկի լիստոկ»-ը նշում էր, որ չնայած ժողովածուները թանկարժեք էին, գնորդները այն տանում էին անտրտունջ և բավականությամբ, քաջ գիտակցելով այն բանը, որ իրենք դրանով որոշակի օգնություն են ցույց տալիս չարքաշ արևմտահայերին[60]։ «Եղբայրական օգնություն» խմբագրությունը, նկատի ունենալով ժողովածուի արագ սպառումը, վճռեց վերահրատարակել, որը շուտով իրականացվեց։ Մինչ հրատարակումը խմբագրությունը ռուս մտավորականներից ստացավ նյութական մեծ օժանդակություն, որին առաջիններից մեկը արձագանքեց վանահայր Ի. Ս. Կրոնշտադտկին[61]։ Վերահրատարակությունից կուտակված մի պատկառելի գումար «Եղբայրական օգնության» խմբագրությունն ուղարկեց Կ. Պոլիս՝ արեմտահայությանը օգնության նպատակով[62]։ Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ա. Ի. Զինովևի և հայոց պատրիարքի ձեռներեցությամբ հիմնվեց առաջին ապաստարանը հայ որբերի համար[63]։

Ժողովածուի խմբագիր Գր. Ա. Ջանշիևը «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի» լրագրին հղած նամակում գրում էր. «Եղբայրական օգնության» խմբագրությունը տարբեր ժամանակներում ռուսական դեսպանության միջոցով տուժածներին 13140 ռ. 65 կոպ. չափով նպաստներ ուղարկելուն զուգընթաց, ուղարկել է ևս 5000 ռուբլի՝ մշտական որբանոցներ հիմնելու համար։ Նկատի ունենալով, որ հայոց պատրիարքի հաշվումներով մեկ որբի վրա կծախսվի մոտավորապես 50 ռուբլի, խմբագրությունն ուղարկել է 50.000 ռուբլի՝ 25 որբերին չորս տարի պահելու համար։ Ինչպես երևում է խմբագրությունում ռուսական կայսերական դեսպանությունից ստացված պաշտոնական ծանուցագրից, պ. դեսպան Դ. Գ.-ն, խորհրդական Ի. Ա. Զինովևը լիակատար համակրանքով են վերաբերվել որբանոցներ հիմնելու մտքին, և պատրիարքի համաձայնությամբ որոշված է առաջին որբանոցը բացել Դիարբեքիրի վիլայեթի Բալու քաղաքում։ Որբանոցն ստացել է հետևյալ պաշտոնական անվանումը. «Հայ-ռուսական որբանոց՝ հիմնված «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին» մոսկովյան ժողովածուի խմբագրությանն արված նվիրատվությունների միջոցով»[64]։

---

57 Вл. Гольмстрам, Распятие (С. Петербургские ведомости, 1897, № 184).

58 *Մշակ, 1897, թիվ 46։*

59 Мир божий, 1898, № 302.

60 Тифлисский листок, 1897, № 339.

61 С. Петербургские ведомости, 1897, № 302.

62 Мир божий, 1898, кн. I. с. 2.

63 *Մշակ, 1898, թիվ 203։*

64 С. Петербургские ведомости, 1898, № 302.

Ապաստարաններ բացվեցին Վանում, Մուշում, Էրզրումում։ Շուտով Կ. Պոլսում բացվեց աղջիկ որբերի համար 8-րդ ապաստարանը[65]։ «Բրատսկայա պոմոշչ»-ի խմբագրությունը արևմտահայ սովյալներին տրամադրեց 5000 ռուբլի[66]։ Այդ նպատակով որոշակի գումար ուղարկվեց Ի. Ա. Զինովևին՝ «Ռուսսկայա վեդոմոստի» խմբագրության կողմից[67]։ Արևմտյան Հայաստանում որբերին խնամելու և կոտորածներից տուժածներին օգնություն ցույց տալու նպատակով ապաստարաններ հիմնվեցին մեծ իշխանուհի Ելիզավետա Ֆյոդորովնայի, Վ. Միխայլովսկու և այլ բարձրաստիճան ծագում ունեցող անձանց դրամական նվիրատվություններով[68]։ «Եղբայրական օգնության» ապաստարաններ բացվեցին նաև Երևանում[69]։

«Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Մշակ», «Ռուսսկիե վեդոմոստի», «Նովոյե օբոզրենիե», Տոմսկում հրապարակվող «Սիբիրսկի վեստնիկ» լրագրի խմբագրություններին կից կազմակերպված օգնության հանգանակությունների հավաքման գրասենյակներում ամեն օր Ռուսաստանի տարբեր ծայրերից ստացվում էին նվիրատվություններ, որոնք ուղարկվում էին տեղական իշխանություններին՝ համապատասխան նպատակով իրացնելու համար։ Նշված թերթերի խմբագրությունները պարբերաբար հաշվետվություններ էին հրապարակում ստացված գումարի և նվիրատուների մասին։ Օրինակ, «Սիբիրսկի վեստնիկի» խմբագրությունը այդ մասին գրում էր. «Մեր խմբագրությունը Պ. Գորենկոյից ստացել է 12 ռուբլի՝ հօգուտ տուժած թուրքահայերի։ Դրա հետ միասին, նվիրատուն խնդրում է մեզ հրավեր կարդալ ընթերցողներին՝ հայերին օգնելու մասին»[70]։

Արևմտահայերին օգնություն ցույց տալու նպատակով հանգանակություն սկսվեց Սամարղանդում, որին մեծ օգնություն ցույց տվեց նահանգապետ կոմս Ռոստովցևը։ Նա այնուհետև թույլատրեց ոստիկանությանը հանգանակություն բացել ողջ Թուրքեստանում[71]։ Կովկասում գաղթականներին օգնության նպատակով կազմակերպված հանձնաժողովը խոշոր դրամական միջոցներ ստացավ հեռավոր Սախալինից[72], Մոսկվայից և Աստրախանից՝ սննդամթերք ու հագուստներ[73]։ Մոսկվայի բնակիչների կողմից Կաղզվանում գտնըվող գաղթականներին ուղարկվեց 300 ռուբլի[74]։ Օգնության գործին ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում նաև զինվորականներն ու պետական պաշտոնյաները[75]։

«Ռուսսկիե վեդոմոստի» լրագիրը տեղեկացնում էր ռուս արվեստի ու դրականության առաջադեմ ներկայացուցիչների կողմից տրված օգնության մասին[76]։

Կովկասի իշխանությունները երկրի տարբեր ծայրերից գրեթե ամեն օր ստանում էին օգնության համար դրամական միջոցներ և սննդամթերք[77]։ «Ռուսսկիե վեդոմոստի», «Ս. Պետերբուրգսկիե վեդոմոստի», «Նովոյե օբոզրենիե» լրագրերի խմբագրությունների միջոցով գաղթականներին օգնող

---

65 Նույն տեղում, 1900, թիվ 32։
66 Նույն տեղում, 1900, թիվ 107։
67 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 7, գ. 141, թ. 1։
68 Մշակ, 1898, թիվ 236։
69 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 50, ց. 1, գ. 1, թ. 1։
70 Сибирский вестник, 1897, № 17.
71 Մշակ, 1897, թիվ 13։
72 Մշակ, 1897, թիվ 2։
73 Մշակ, 1897, թիվ 6։
74 Մշակ, 1897, թիվ 2։
75 Մշակ, 1897, թիվ 3։
76 Русские ведомости, 1896, № 359.
77 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆ. ց. 1, գ. 262, թ. 12։

հանձնաժողովներին հանձնվեց պատկառելի գումար[78]։ Արխանգելսկի նահանգի Շենկարսկ գյուղի համայնքի ժողովը, որոշակի գումար տրամադրելով, առաջարկում էր կառավարությունից պահանջել միջոցներ գործադրել կոտորածները դադարեցնելու համար։

Վոլինսկի նահանգի պետական ու հասարակական հիմնարկների ծառայողները տրամադրեցին 145 ռուբլի, Պոլտավայի նահանգի Լովխիցկի և Կրեմենչուգ քաղաքների բնակիչները՝ 697 ռ.։ Յարոսլավլի նահանգի գյուղական համայնքներից մեկի կողմից ստացվեց 207 ռ. 96 կ., Օրենբուրգի նահանգից՝ 40 ռ. 76 կ., Կուրսկի նահանգից՝ 100 ռ. 48 կոպ., Վլադիմիրի նահանգի Սուդոգդե քաղաքի բնակիչներից՝ 9 ռ. 73 կ., Բախմուտի քաղաքացիներից՝ 175 ռ. 70 կ., Լոձի քաղաքացիներից՝ 75 ռ., Ստարայա ռուս քաղաքի արհեստավորներից՝ 75 ռ.[79], Կարսի քաղաքացիներից՝ 300 ռուբլի[80] և այլն։

1897 թ. փետրվարի 13-ին Տավրիկյան նահանգապետը հրամանագիր հրապարակեց ողջ նահանգում գաղթականների համար հանգանակություն սկսելու մասին[81]։ Շուտով Տավրիկյան նահանգի բնակչությունից 3.597 ռ. 36 կ. ուղարկվեց Կովկասի իշխանություններին[82]։

Հանգանակության գործը ավելի աշխուժացավ։ 1897 թ. ամռանը և աշնանը Ռոստովում, Կրեմենչուգում, Նոր Նախիջևանում, որին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին և՛ գյուղական, և՛ քաղաքային բնակիչները[83]։ Օգնության ֆոնդին ներդրում կատարեցին նաև Սմոլենսկի նահանգի Ռուդավլ քաղաքի ոստիկանական առաջին և երկրորդ գնդերը, Զապորոժիեի, Կամենսկոյե-Եկատերինսկյան երկաթուղագծի բանվորները, Սամարայի, Վոլոգդայի նահանգի և Կուբանի մարզի բնակչությունը[84]։

Հայ գաղթականներին հագուստեղենով ապահովելու նպատակով Յարոսլավլի մեծ մանուֆակտուրայի աշխատակիցները տրամադրեցին 4890 արշին կտորեղեն[85], իսկ Կոնդրովսկյան մանածագործական մանուֆակտուրայի բանվորները հատկացրին 350 ռ.[86], Կուրանի մարզի մանուֆակտուրաները՝ 9 փութ կշիռ ունեցող կտորեղեն[87]։ 1897 թ. հունվարի 11-ին Կրասնոդարի բնակիչները «Նադեժդա» գրասենյակի միջոցով հագուստեղեն, ինչպես նաև նյութական այլ միջոցներ տրամադրեցին գաղթականներին[88]։ Պատկառելի գումար տրամադրեցին Դոնի (Донской), Ազովի (Азовский և Учетный) բանկերը[89]։

1897—98 թթ. Արևմտյան Հայաստանում անբերրիության հետևանքով տարածված սովի ժամանակ արևմտահայությանը նյութական օգնություն ցույց տալու նպատակով կրկին սկսվեց հանգանակության հավաքման գործը[90]։ Իշխանությունները թույլ տվեցին մի շարք շրջաններում հիմնելու բարեգործական ընկերություններ[91], ինչպես նաև փոխատու դրամարկղներ[92]։

---

78 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 41, 75, 118։

79 С. Петербургские ведомости, 1897, № 110.

80 Карс, 1896, № 2.

81 Մշակ, 1897, թիվ 22։

82 С. Петербургские ведомости, 1897, № 110.

83 Մշակ, 1897, թիվ 24։

84 Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1899, с. 4.

85 Նույն տեղում, էջ 14։

86 С. Петербургские ведомости, 1827, № 110.

87 Նույն տեղում։

88 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 124։

89 Մշակ, 1897, թիվ 24։

90 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 821, ց. 139, գ. 28, թ. 11։

91 Закавказье, 1908, № 75.

92 Մշակ, 1896, թիվ 109։

Գաղթականությանը օգնության ձեռք մեկնեցին Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների ներկայացուցիչները՝ վրացիները, ռուսները, ադրբեջանցիները, հույները[93]։

Կարսում գաղթականներին օգնություն ցույց տվեցին «Սովորողներին օժանդակող ընկերության կոմիտեի» անդամները[94]։ Այդ օգնությունը այնքան ակնբախ էր, որ 1898 թ. մայիսի 12-ին ընկերության հերթական նիստում երախտագիտության խոսք ասվեց ընկերության նախագահին, ինչպես նյութական, այնպես էլ հայ մանուկների ուսման հարցում ցույց տված օգնության համար[95]։

Ռուսական կայսրության երկու խոշոր կենտրոնների՝ Մոսկվայի և Պետերբուրգի առաջադեմ հասարակության ներկայացուցիչներն աշխատում էին բաղմատանջ հայ ժողովրդին ռուս ժողովրդի նյութական և բարոյական օգնությունը ավելի ընդարձակել ու դրան առավել կազմակերպված բնույթ տալ։ Այդ մասին «Լուչը» գրում էր. «Պետերբուրգում նախատեսվում է հիմնել ռուս-հայկական ընկերություն, այդ ընկերության նպատակը պետք է լինի ուսումնասիրել հայ ժողովրդի անցյալը և ներկա կյանքը, պաշտպանել հայերին իրանց դեմ անարդար հարձակումներից, օգնել ազատ, տաղանդավոր հայերին, ռուս ընթերցող հասարակության մեջ տարածել կարևոր տեղեկություններ հայերի մասին»[96]։ Նման ընկերություն կազմակերպելու աշխատանքներ էին սկսվել նաև Մոսկվայում, որտեղ արևմտահայությանը նյութական օգնություն ցույց տալու գործին ձեռնամուխ եղավ Մոսկվայի քաղաքային դուման։ 1897 թ. հունվարի 20-ին, դումայի նիստում Մոսկվայի գեներալ-նահանգապետի առաջարկությամբ որոշվում է հանգանակություն սկսել[97]։

Կայսրության երկու մայրաքաղաքների բնակչության հանդես բերած այդ նախաձեռնությունը բարձր է գնահատել օգնության և պաշտպանության կարոտ հայ ժողովուրդը։ «Մշակը», նկատի ունենալով Պետերբուրգում կազմակերպվող «Հայ-ռուսական» ընկերությանը» նշում էր. «Այդ ցանկալի է, մանավանդ այժմ, ներկա պայմաններում, երբ խավարի որդիք, քաղաքական և գրական աֆերիստները ձեռք-ձեռքի տված ձգտում են ռուսաց մեծ ազգի մեջ ատելություն սերմանել դեպի փոքրիկ հայ ազգությունը և վերջնականապես խզել այն կապը, որով շաղկապված է հայոց փոքրիկ, բայց կուլտուրական համայնքը քաղաքակրթության կողմնակից ռուս տարրի հետ»[98]։ Դրվատելով Մոսկվայի քաղաքային դումայի՝ հայ ժողովրդի օգնության գործը կազմակերպելու նախաձեռնությունը, «Մշակը» գրում էր. «Դա մի բարոյական պարտ է, որ փորձում է կատարել Ռուսաստանի հին մայրաքաղաքի ինքնավարական մարմինը, և հույս ունենք, որ Մոսկվայի տված օրինակը հետևողներ կգտնի Ռուսաստանի մյուս քաղաքներում»[99]։

Ռուս սիրողական արվեստի ներկայացուցիչներն իրենց արվեստը ծառայեցրին հայ գաղթականների օգնության գործին։ Վլադիկավկազում գործող թատերական խմբերը դերասաններ Պ. Նիկուլինի և Ա. Ա. Վոլսկու ղեկավարությամբ տվեցին ներկայացումներ։ Պ. Նիկուլինի խումբը ներկայացրեց «Բազեներ ու ագռավներ» դրաման և «Լռություն» վոդևիլը։ Այդ ներկայացումներից ստացված գումարը՝ մոտ 600 ռ., հատկացվեց հայերի օգնության ֆոնդին[100]։ Ա. Ա. Վոլսկու խումբը օգնության ֆոնդին նվիրաբերեց

---

93 Նույն տեղում, թիվ 3, 43, նաև 1898, թիվ 2։

94 Карс, 1897, № 16.

95 Карс, 1897, № 20.

96 Մշակ, 1897, թիվ 33։

97 Русские ведомости, 1897, № 23.

98 Մշակ, 1897, թիվ 33։

99 Մշակ, 1897, թիվ 12։

100 Նույն տեղում, թիվ 13, նաև Русское слово, 1896, № 14։

351 ռ.[101], իսկ Թերեքի մարզի սիրողական դերասանական խումբը՝ 403 ռ. 50 կ.[102]։ Իշխանուհի Եղիսաբեթ Մերեթելու ղեկավարությամբ Սուխումում վրացի և ռուս թատերասերները ներկայացրեցին «Մաղկեփունջ» վոդևիլը և երկու դրամա, որոնցից ստացված դումարը հատկացվեց օգնության ֆոնդին[103]։ Ալեքսանդրապոլում թատերական ներկայացումներից գոյացած գումարը իրացնելու նպատակով գավառապետը հատուկ թույլտվություն ստացավ նահանգային իշխանությունից։ «Մեր գավառապետը,—գրում էին «Մշակին» Ալեքսանդրապոլից,—նահանգական կառավարությունից թույլտվություն է խնդրել, որպեսզի այս փողերը (մոտ 2000 ռ.) ղրկեն մեր քաղաքում գտնվող գաղթականների համար»[104]։ Կովկասյան բանակի 155-րդ հետևակային գնդի զինվորներն իրենց կազմակերպած թատերական ներկայացումից ստացված դումարը հատկացրին արևմտահայերի օգնության ֆոնդին[105]։ Ստավրոպոլի ռուս մտավորականության ներկայացուցիչները կազմակերպեցին պարահանդես և ձեռք բերած գումարը նվիրեցին օգնության ֆոնդին[106]։ Նույնպիսի նախաձեռնություն հանդես բերեցին Պյատիգորսկի ռուս թատերասերների խումբը[107], Մարկով եղբայրների կրկեսային շրջիկ խումբը[108], Աննա Ուլյանովայի խումբը[109] և ուրիշները։

Ռուսական հասարակայնության հոգատար և կարեկից վերաբերմունքը երախտագիտության արձագանքներ էր առաջացնում հայ ժողովրդի հոգում։ Վրաստանի պատմության արխիվում պահպանվել է մի խումբ արևմտահայերի կողմից «Գոլոս» լրագրին հղած նամակը, որտեղ նշված է. «Մի բուռ բազմաչարչար ժողովուրդը, ի դեմս մեզ, Էրզրումի հայերիս, ձեզ է հայտնում երախտագիտության անսահման զգացումը՝ արդարության խոսքի ու պաշտպանության համար, որը դուք բոլորդ մեծ խանդավառությամբ արտահայտում եք «Գոլոսի» էջերում։ Թերթը շատ զգայուն է օսմանյան կիսալուսնի լծի տակ հեծող մեր ազգի ձայնի նկատմամբ։ Դարեր ճնշված մեր ժողովուրդը երախտագիտության արցունքներ է հեղում»[110]։

Ղրիմում ապաստանած հայ գաղթականներն իրենց սրտի խոսքն էին հղում ռուս մտավորականության ներկայացուցիչներին, ի դեմս նրանց, երախտագիտություն հայտնում ռուս մեծ ժողովրդին։ «Մեր հայացքներն ու ավերված հայրենիքում մեր հարազատ եղբայրների ու քույրերի հույսերը,—ասում էին հայ գաղթականները,—ուղղված են դեպի հյուսիս։ Ձեզանից ու Ձեր մեծահոգի ու մարդասեր, ինտելիգենտ աշխատակիցներից, ռուս եղբայրներից, բարեսիրտ Ռուսաստանից ենք սպասում իսկական եղբայրական օգնություն, չէ՞ որ միայն հզոր Ռուսաստանի ձեռքի շարժումով մեր տարաբախտ հայրենիքում (Արևելյան Հայաստանում—Պ. Ս.) հաստատվեց արտաքին խաղաղություն և հանգստություն»[111]։

«Եղբայրական օգնություն» ժողովածուի հրապարակման մարդասիրական նպատակները նկատի ունենալով, նրա խմբագիր Գր. Ա. Ջանշիևի միջոցով հայ գաղթականներն իրենց շնորհակալական խոսքն ուղղեցին ռուս մտավորականությանը։ «Պատվի գիտակցմամբ և Saum Gulg-ի կանոնի հա-

---

101 С. Петербургские ведомости, 1897, № 110.
102 Նույն տեղում։
108 Մշակ, 1897, թիվ 24։
104 Նույն տեղում, թիվ 6։
105 Карс, 1899, թիվ 11։
108 Մշակ, 1897, թիվ 24։
107 Մշակ, 1897, թիվ 21։
108 Մշակ, 1897, թիվ 22։
109 Մշակ, 1897, թիվ 13։
110 Լեզբերումը տե՛ս Ш. В. Мекрелидзе, Закавказье в русско-турецкой войне. 1877—1878 гг., Тбилиси, 1972, с. 280.
111 Мир божий, 1899, кн. 9, с. 21.

մաձայն,—դրում էր Գ.Գ. Ջանշիևը,—ես ինձ վրա եմ վերցնում այդ խորապես զգացմունքային ողջույնները ըստ պատկանելության հաղորդելու հաճելի պարտականությունը ռուս մտավորականությանը և բոլոր բարի մարդկանց, որոնք արձագանքեցին բազմաշարշար հայերի անսահման դժբախտություններին»[112]։

Այսպիսով, ռուս առաջադեմ մտավորականությունը և ժողովրդական աշխատավորական խավերը, խորապես մտահոգված լինելով բազմաշարշար արևմտահայության ճակատագրով, բարոյական ու նյութական բազմակողմանի օգնություն ցույց տվեցին Թուրքիայում XIX դ. 90-ական թվականներին տեղի ունեցած հայկական կոտորածների հետևանքով Ռուսաստանի սահմաններն անցած, մազապուրծ արևմտահայ գաղթականներին՝ իրենց համակրանքն ու համերաշխությունը հայտնելով արևմտահայության գոյապահպանության գործին։

ПОМОЩЬ РОССИИ ЗАПАДНОАРМЯНСКИМ БЕЖЕНЦАМ (1895—1900)

П. С. СИМОНЯН

Резюме

Кровавые события 90-х годов XIX в., имевшие место в Западной Армении, были первым массовым проявлением программы армянского геноцида, принятой турецким правительством. Турецкое правительство поставило перед собой задачу—уничтожить армянский народ, оставить страну без коренного населения и па турецкий лад решить «Армянский вопрос»—пет народа—пет проблемы.

Тысячи западных армян покинули свою многовековую родину и переселились в разные страны, прежде всего в Россию, которая па протяжении многих веков являлась пристанищем для армянского парода.

Несмотря на то, что в 90-х гг. XIX в. царская Россия имела особые военно-политические интересы на Ближнем Востоке, в «Армянском вопросе» она придерживалась нового направления, в результате чего ввела ограничения и запрет на расселение чудом спасшихся от ятагана западных армян в пределах Российской империи. Однако широкие слои русского народа, все его социальные прослойки оказали всестороннюю материальную и моральную помощь армянским беженцам. Дело помощи возглавляла передовая русская интеллигенция.

112 Նույն տեղում, էջ 20։